ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.05.2015թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77^1-77^6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի հունվարի 19-ի N 6-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ծաթեր համայնքի ղեկավարին:

Արմեն Շահվերդյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Սամվել Խառատյան _____

Արտակ Դեմիրչյան _____

Համայնքի ղեկավար՝
Բագրատ Ղալայան _____